

նորա՝ (Ապումուսէի) հրամանն ետ (Ապումուսէ) բոլոր աշխարհին իւրոյ ելանել ունել զլեոնակողմն, ուչ եղեալ ուժեղութեամբ եւ քաջութեամբ սրտիւ ընդդիմանալ, մանաւանդ ի Ծանարացն զնա (Բուղան) տեսեալ ի պարտութիւն մատնեալ եւ յաղթահարեալ: Ո՛չ, ասէ, վատագոյն մեք քան զԾանարսն եղիցուք, զի եւ ամուրս հօրագոյնս եւ բարձրագոյնս քան զնոսս ունիմք եւ դիրափակս՝ առ ի յունել ըզմուտս կրնիցն. միայն միաքանութեամբ սրտի կացցուք ապաւինեալ յօգնականութիւնն Աստուծոյ. եւ թէ մեռանիլ եւս ումեք հասցէ՝ ի պարծանս անձին եւ ազգին իւրոյ համարեալ է, եւ պսակ մարտիրոսական ընկալցի ի Քրիստոսէ. զի ոչ եթէ ըստ հասարակաց սահմանաւոր մահու է, այլ ի վերայ սուրբ եկեղեցւոյ եւ ժողովրդեան Աստուծոյ: **Ջայտսիկ եւ առաւել քան զայս ասելով՝ զնէր առաջի զօրաց իւրոց ստուածասէր իշխանն Աղուանից:**

« Իսկ Բուխայի առեալ զբազմութիւն զօրացն իւրոց՝ իջանէ Գաղարացւոց, եւ երթեալ մտանէ ի քաղաքն մեծ Պարտաւ: Եւ սկսաւ գոռալ, եւ խորհէր զթոյնս չարութեանն թափել ի վերայ իշխանին Աղուանից, եւ յղէր առ նա կոչելով ի հնազանդութիւն. այլ նա ոչ տայր տեղի բանից նորա, քանզի քաջագոյնս դիտէր ըզբարս նորա խարերայս: Եւ ժողովեալ ըզբնակիչս աշխարհին համօրէն զարս եւ ըզկանայս եւ զայլս ի յերկրէն Աղուանից բազմութիւն ռամիկ շինականաց, եւ լէզէնս զօրականաց զսակաւս ի լեռոնն ամուր անուանեալն Քթիչ, ըստ այնմ եւ համարսս ոտճկաց: Եւ Բուխայի իմացեալ որպիսի պատրաստութեամբ կազմի իշխանն Աղուանից՝ տարակուսէր ի միտս իւր. զի եւ զբազումս պատերազմեալ պէսպէս մարտիւք, եւ ոչ ինչ կարացեալ ստնանել անմարտնչելի ամրոցացն եւ քաջութեանց արանցն որ ի նմա՝ ողոքական բանիւք կոչէր ի հաւանութիւն» (էջ 289-90):

Հոս Արծրունի կու տայ բանակցութեանց շարունակութիւնը որ մեր նիւթին

համար կարեւորութիւն չի ներկայացներ հոս: Վերջապէս «Ապումուսէ վառեալ եւ զինեալ զինքն ամենայն զօրութեամբ իւրով՝ խաղաց էջ ի վերայ նոցա եւ եհար ի հարուածս մեծամեծս, եւ առ աւար բազում եւ դարձաւ ի տեղի իւր ի բանակ իւրեանց: Ապա այնուհետեւ ոչ կարաց կալ համարձակութեամբ ի բացեայ առնել զբանակն իւր, այլ ետ զկէս զօրուն յոմն զլիսաւոր եւ նստոյց զնա ի կողմանէ հիւսիսի կողմն. եւ ինքն բազմութեամբ զօրաց նստաւ յարեւելից կուսէ, եւ շինեցին ապարանս ամուրս եւ պարսպեցին մեծաւ զոչութեամբ. կանգնեցին պատնէչ եւ կուտեցին քարինս եւ կանգնեցին մեքենայս եւ կացին ի պատրաստութեան: Եւ յետ փոքր ինչ աւուրց հրամանն ետ Բուխայ ելանել ի պատերազմ. եւ կարգեցին ճակատս, եւ բոլորեցին ռազմ, եւ զունդս յընտրելոց զօրացն ըստ ազգս ազգս, շուրջանակի ի ներքս փակեցին զբառնն եւ զբուռս եւ նշանս բարձրագոյնս լայնատարածս կանգնեցին. կարգեցին ըստ զունդս զունդս առ Շայր նշանակ մի. եւ զի մի մի թուիցէ յանուանէ զյաճախութիւն զինուոց եւ զսպառազէն կազմութեանցն զճիւղցն եւ զհեծելոց նոցա. զիտակ են այլմ արք քաջք, եւ որ միչտ ի պատերազմունս ըզդեզերումն առնեն՝ զումար արարեալ են, ամենայն զինուոր ի գանձարանս ի տունս գանձուց թաղաւորին, զոր բարձեալ ուղտիւք կրէին ընդ ինքեանս: Ելին ի պատերազմ եւ պատերազմեցան, ըստ որում սաստկացաւ պատերազմն: Եւ խուռն յարձակմամբ դիմեցին ի վերայ իւրեանց. եւ հարան զօրքն արքունի ի հարուածս մեծամեծս եւ դարձան փախստական ի բանակն իւրեանց եւ մտին յապարանսն զոր շինեալ էին. եւ լեռնային զօրքն Ապումուսէի զհետ մտեալ փախստէիցն՝ իջուցին ի լեռնէ անտի եւ դարձան առնել դիակապուտ, եւ չոգան ի բանակատեղ իւրեանց մեծաւ յաղթութեամբ, ուրախացեալ անտրտում խնդութեամբ, եւ նստան պահել զպահպանութիւն իւրեանց եւ աշխարհա-